

ՆԻԿՈՂՈՍ ԹԱՀՄԻԶՅԱՆ

ՀԱԿՈԲՈՍ ԱՅՎԱՋՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ
«ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԶԵՌՆԱՐԿԸ»

Հակոբոս Այվազյանը անցած հարյուրամյակի վերջի և ներկա դարի սկզբի արեմտահայ երեխի երաժիշտներից է: Ծնվել է 1869-ին, Արմաշում, Համեստ աշխատավորի ընտանիքում: Նախնական կրթությունն ստացել է տեղի Նարեկյան վարժարանում: Ավարտել է նաև Պրուսայի շերամաբուծական ուսումնարանը: Բայց նրա վաղագույն, տեական, ու, ի վերջո, նաև մասնագիտական հետաքրքրությունների գլխավոր առարկան եղել ու մնացել է երաժշտարվեստում:

Այվազյանի երաժշտական հակումներն ու ընդունակությունները դրսելու վեհականագույն տարիներից: Տակավին նախակրթարանում սովորելիս, զգայուն զպրոցականը տարվել է հայկական եկեղեցական երաժշտությամբ, սիրով ու խանդավառությամբ մասնակցել բոլոր ժամերգություններին, և ընդհանուր երաժշտականությամբ, երգչափին հաճելի ձայնով, նուրբ լսողությամբ ու հիշողությամբ գրավել Արմաշի զպրեվանքի երգեցողության ուսուցիչ և Զարխափան ս. Աստվածածին եկեղեցու զպրապետ, մհանձուտ երաժիշտ Պապա Համբարձում Զերշյանի ուշադրությունը: Դա մշնորոշ նշանակություն է ունեցել Այվազյանի կյանքում:

Նա իր երաժշտական կրթությունն ստացել է Արմաշի Դպրեվանքում: Յուրացրել է հայկական ձայնագրությունը, հայ եկեղեցու տարեկան շրջանի բոլոր երգեցողությունները, ինչպես և աշխարհիկ՝ մերձարեկելյան քաղաքային մասնագիտացված երաժշտության հիմունքները: Նաև ինքնուրույն աշխատանքով ծանոթացել է ելլորպական երաժշտական գրանանաշության տարերքին, սովորել է նվազել ու վարժ նվազել է ուղ, չութակ և ձեռնադաշնակ:

1891-ին Արմաշից հեռացող Համբարձում Զերշյանի հանձնարարությամբ և անմիջական կարգադրությամբ, զպրեվանքի երաժշտության ուսուցիչ է նշանակվում 22-ամյա Հակոբոս Այվազյանը: Այդ պաշտոնին նա մնացել է զրեթե քառորդ դար՝ մինչև Մեծ եղենը (երկու տարվա ընդմիջումով, երբ աշխատել է Անկարայում, դարձյալ՝ որպես երաժշտության ուսուցիչ):

Մավալելով բազմակողմանի գործունեություն, նշված տարիների ընթացքում Այվազյանը հայ եկեղեցական երաժշտության ճաշակ է ներարկել մի ամբողջ շարք ապագա (այդ թվում և նշանավոր դարձած) կղերականների, ճանաշում ու հեղինակություն է ձեռք բերել որպես հմուտ երաժշտապետ, հեղինակել աշխարհիկ ու հոգեր երգեր, զրական ու երաժշտագիտա-

կան դործեր, այլև ժամանակ գտել խնամքով արտագրելու իր ուսուցչի կազմած ծավալուն ժողովածուները՝ ժամագիրքն ու Զայնքաղ Շարականը:

Այվազյանի կարողությունների և հնարավորությունների մասին հստակ գաղափար են ունեցել արևմտահայ Հոգեոր բարձրագույն իշխանությունները: 1908-ին Կ. Պոլսի հայկական Ազգային Կենտրոնական վարչությունը, պաշտոններգության բարեկարգման խնդրի քննարկման առթիվ, Հակոբոս Այվազյանին, որպես հայ եկեղեցական երաժշտության խոշոր մասնագետի, հանձնարարում է կարեորագույն մի գործ. ժամերգությունները պատշաճեցնել նոր ժամանակների պահանջներին այնպես, որ հոգեոր եղանակներն ավելի ամփոփված լինեն, առանց կորցնելու իրենց ոճական ավանդական հատկանիշները: Հինգ տարի նվիրելով այդ գործի կատարմանը, Այվազյանը պատրաստում է մի ստվարածավալ հասոր, որը, սակայն, չի հասցնում ներկայացնել ազգային կրոնական ժողովին, և որից կարեոր մասիր անդարձ կորչում են աքսորի տարիներին:

Առաջին աշխարհամարտի սկզբին, արևմտահայ Հարյուրավոր մտավորականների կողքին ձերբակալվում և արտորվում է նաև Հակոբոս Այվազյանը: Հետեւում է ընդհանուր տարագրությունը: Ընտանիքը Այվազյանին հանդիպում է Կոնֆայի մեջ: Այստեղ էլ, սակայն, նոր հալածանքների է ենթարկվում երաժշտապետը, ի վերջո՝ բանտարկվում է և մահանում բանտում 1918-ին:

Նրա ձեռագրերը փրկել է որդին՝ Գեղամ Այվազյանը (Հետազայում հայտնի բժիշկ-ատամնաբույժ), տարագրության դաժան պայմաններում հնարավոր ամեն շանք զործադրելով դրանք անվիճակ ու անկորուսա պահելու համար:

Եվ ահա, 1959 թվականին դ-ր Գեղամ Այվազյանը ճիշտ որոշում է ընդունում՝ հայրենադարձնել հոր ձեռագրերը. և անձամբ բերելով դրանք երեվան, հանձնում է Եղիշե Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի երաժշտական բաժնին¹: 60-ական թվականների սկզբին այստեղ ստացվում է նաև Շ. Նարզունու՝ Փարիզում տպագրված գրքույկը. «Հակոբոս Այվազյան երաժշտապետ» (Կյանքը, որոճը և նմուշներ)²: Այն գրքած է Գեղամ Այվազյանի տրամադրած նյութերի հիման վրա: Աշխատության մեջ հեղինակը նախ շարագրում է Հակոբոս Այվազյանի կենսագրությունը, հետո ներկայացնում նրա ժառանգությունը, այն բաժանելով երկու հիմնական մասի՝ գրական (բանասիրական) ու երաժշտական:

Դրական գործերից հիշատակվում է երկու անտիպ աշխատություն՝ «Արմաշի գյուղաբարբառը» (փաստորին՝ մի բառարան) և «Արմաշի պատմությունը» (որ ճիշտ կլիներ անվանել՝ Դարեկվանքի պատմությունը):

Բուն երաժշտական ժառանգությունը ևս բաժանվում է երկու հատվածի՝ աշխարհիկ ու եկեղեցական:

Առաջինի մեջ գասվում են քնարական ու հայրենասիրական բովանդակության հայերեն երգեր, սիրային բովանդակության հայատառ թուրքերենսիվ հորինված երգեր (շարքիներ), ինչպես և «Արևելյան երաժշտության

¹ Հիշյալ թվականից էլ 20. ԴԱԲ-ի երաժշտական բաժնում գոյություն ունի Հակոբոս Այվազյանի դիմանը:

² ԶԱ ԴԱԲ, Հակոբոս Այվազյանի դիման, նյութ Հ. Ցաւ:

ձեռնարկը» (որ Նարդունին «Դասագիրք» է անվանում): Երկրորդ հատվածը կազմում են Հոգևոր հայտնի բանաստեղծությունների՝ Պատարագի և Ժամագրքի երգերի գրական խոսքերի վերաեղանակավորումներ և աղոթքներ (այլև հայկական եկեղեցական ձայնադրության անավարտ մի Դասագիրք, կավելացնեինք մենք, որ յուրահատուկ կապեր ունի վերոհիշյալ «Արևելյան երաժշտության ձեռնարկի» հետ):

Այսպես ներկայացնելով Հ. Այվազյանի ժառանգությունը, և օրինակ-ներ ու փաստաթղթեր առաջ բերելով «Նմուշներ» բաժնում, Նարդունին «Ավանդապահը» ենթախորագրի տակ իր մտորումներն է շարադրում երաժշտապետի տեղի մասին հայ Հոգևոր մշակույթի պատմության մեջ: Բատայդմ՝ Այվազյանը բնութագրվում է որպես մի գործիչ, որն իր դերը տեսնում էր ազգային եկեղեցական արվեստի հարստությունները բժախնդիր ճշտությամբ հաստատագրելու և սերունդներին հավատարմարար փոխանցելու մեջ. ի դեմս այն իրականության, որն ստեղծվել էր XIX դարի վերջում և XX-ի սկզբում, և որը հատկորշվում էր Պոլսի ու Թիֆլիսի հայկական մամուլում ևս արձագանք գտած սուր վեճերով՝ հայ Հոգևոր երաժշտության գրառման ասպարեզում եվրոպական ձայնադրագիտության հնարավորություններից օգտվելու նպատակահարմարության շուրջ:

Նարդունու զրբույկը գնահատելի աշխատություն է: Արժանին հատուցելով Հ. Այվազյանի կյանքի ու գործի լուսարանությանը ուղղված նրա ջանքերին, միաժամանակ պետք է անենք երկու դիառը պություն: Նախ՝ Եթե Այվազյանն իր ավանդապահությամբ, և կամ, ավելի ճիշտ կլիներ ասել՝ որոշ արևելահայացությամբ, կանգնած էր Հ. Լիմոնջյան—Ա. Հովհաննիսյան—Հ. Զերյան գծի վրա. ապա եվրոպական ձայնադրագիտության սկզբունքներից խելամտորեն օգտվելու կողմնակիցներն էլ աշքի առաջ ունեն Հ. Լիմոնջյան—Ա. Հովհաննիսյան—Գ. Երանյան—Ն. Թաշճյան գիծը գոյացնող ոչ պակաս հմուտ երաժիշտների փորձն ու տեսական դրույթները³: Երաժիշտներ, որոնք իրենց հռանգուն գործունեությամբ վաղուց կանխորոշել էին պայքարի ելքը՝ հօգուտ արևելյան և արևմտյան տարրերի յուրահատուկ զուգորդության սկզբունքի:⁴ Եվ հետո՝ Հ. Այվազյանի, որպես խոհուն երաժշտի ու տեսարանի գիտաստեղծագործական դիմանկարը բնութագրող հիմնական նյութերը միայն զուտ ազգային ու եկեղեցական երաժշտությանը չէ որ վերաբերում են: Այդ նյութերի շարքում առաջնակարգ տեղ է գրավում նաև, մասնավորապես, Այվազյանի «Արևելյան երաժշտության ձեռնարկը», որի հետ որոշակի կապերի մեջ է, ասացինք, նրա հայկական եկեղեցական ձայնադրության անտիպ ու անավարտ Դասագիրքը:

Վերջինս մեզ հանդիպել է Այվազյանի դեռևս շկարդավորված (քիչ թե շատ մանրամասն շնկարագրված) երևանյան դիմանի նյութերից Հյուո-

3 Տե՛ս մեր Հոգևորը՝ Կոմիտասը և Հայոց Հոգևոր երդարվեստի ուսումնամեթության հարցը, «Կոմիտասական», հ. 1, Երևան, 1969, էջ 174:

4 Անկախ զրանից, թե՛ մեկ, և թե՛ մյուս խմբավորման պատկանող դիմակից երաժիշտների առքեն ծառացած զիմանցոր խնդիրը եղել է՝ Հոգեւոր երդարվեստի բնագավառում կռւտակված մեղեղիական աչքի ընկնող հարստությունը հարազատորեն պահպանել ու հավատարմաբար փոխանցել սերունդներին: Խնդիրը, որը նոր շրջանի հայ երաժիշտները ժառանգել էին ուշ միջնադարից: Հմմտ. Ն. Թահմիզյան, Երաժշտությունը հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1982, էջ 47:

ընդանուր խորադիրը կրող մի տեսրում, որտեղ իրոք հոգեոր երգերի ձայնագրություններ են ամփոփված: Հ. Իմոնջյանի «Տիրածին կոյս» ներբողատիպ ծավալուն դործից (որի գրական խոսքերում ուսուցողական նպատակներով հիշատակվում են, ի դեպ, մերձարևելյան շուրջ քսան տիպական եղանակների անուններ):⁵, մինչև Մ. Եկմալյանի բազմաձայն Պատարագից հատվածներ և այլն: Այս նյութերի մեջ, «Զայնագրութիւն» վերտառության տակ, բավական անսպասելի, հանդիպում է դիտարկվող «Դասագիրքը»:⁶ Այն շարադրված է հարց ու պատասխանի ձևով և ունի պարզ կառուցվածք՝ բաժանված է մի շարք «գասերի»:

Սուազին դասը նվիրված է երաժշտական տվյալ համակարգում գործածական ամբողջ և կես ձայնների, որով և հիմնական, բնուղիղ (դիատոնիկ) ու բաղադրյալ (քրոմատիկ) ձայնաշարերը բաղկացնող աստիճանների ու դրանց դասավորության բացատրությունը: Զայնաստիճաններն այստեղ բերվում են հայկական և արևելյան զույգ անուններով: Ամբողջ ձայնների շարքն սկսվում է Ժ'-ից, որին հավասարեցված է «փուշ»-ը, արևելյան անունով՝ «եգյահ»-ը: Կես ձայնների շարքն սկսվում է Ժ'ս'-ից, որին հավասարեցված է «փուշ կիսվերը», արևելյան անվանակոչությամբ՝ «բէս հիսար»-ը: Առհասարակ, կես ձայնների շարքը՝ կիսվեր, այն է՝ բարձրացված աստիճանների շարք է: Այս բոլորից հստակ երեսում է, որ զենքու հայկական ձայնագրության նոր համակարգի ստեղծողն իսկ՝ Հ. Իմոնջյանը, ձայնների բարձրության հարաբերությունների հարցը լուծելիս, հիմնականում բավարար է համարել XVIII դարի հայ նշանավոր երաժիշտ Թամբուրի Հարութինի «Արևելյան երաժշտության ձեռնարկում» ընդունված դրությունը,⁷ կատարելագործել է այն՝ հատկապես կիսվերի նշանի զորությանն ու դործածությանը վերաբերող կանոնների շրջանակում⁸ ու խարսխվել դրա վրա: Եվ Հակոբոս Այվազյանն էլ, որպես հայ ձայնագրագետների «պահպանողական» թերթիցին ներկայացուցիչներից մեկը, հարազատորեն արտահայտել է ճիշտ այդ՝ նախնական պատկերը:

⁵ Հմմտ. նաև՝ Տ. Պալյան, Հայ աշուղներ, տեսր Ա., Զմյուռնիս, 1911, էջ 15:

⁶ ՉԱԳԱԲ, Հակոբոս Այվազյանի դիման, նյութ Հ. Ի.:

⁷ Այդ ավանդույթը գալիս է հնուց՝ Հ. Իմոնջյանի զործունեության աարիներից: Վերջինս, ինչպես գիտենք, իր երաժշտատեսական փորձերը կատարում էր, հենվելով թամբուրի վրա և օգտվելով նրա լարերի ու մասնատեղերի անուններից: Գ. Երանյանն ու Ն. Թաշճյանը ժամանակին հրաժարվել են ձայնաստիճանների արևելյան անվանակոչություններից, պահպանելով միայն հայկականները: Հ. Այվազյանի «Դասագրում» արտացոլված է ավելի նախնական ավանդույթը:

⁸ Հիրավի մերձարևելյան, այդ թվում և հայկական միաձայնային երաժշտության հիմնական և ձեռփոխված (բարձրացված) ձայնաստիճանների երկու կարգերն ըստ էության նույն են թամբուրի Հարութինի և Հ. Իմոնջյանի հաստատված համակարգում: Հմմտ՝ Շամբուրտ Արյուն, Руководство по Восточной музыке (Перевод с турецкого, предисловие и комментарии Н. К. Тагмизяна), Ереван, 1968, с. 74—78, 128—129.

9 Խոսքը կիսվերի նշանին համացված ան զորության մասին է, որով մերձարևելյան և հայկական երաժշտության հիմնարար (բնուղիղ) ձայնաշարի լոկրիտական (արդի լավ հավասեցված համակարգի համապատասխան հելլունների բաղկատմամբ փոքր-ինչ ցած) ձայնաստիճանները բարձրացվում են կես ձայնից էլ պակաս մի ձայնամիջոցի շափով: Հայ (և, միաժամանակ, մերձարևելյան) միաձայնային երաժշտության հիմնարար բնուղիղ ձայնաշարի առանձնահատկությունների մասին տե՛ս Խ. Ս. Կյանքը, Вопросы истории и теории армянской монодической музыки, Л., 1958, с. 323.

Դասագրքի երկրորդ, երրորդ, շորրորդ և հինգերորդ դասերում լուսաբանվում են Հնչյունների հարաբերական տեսղությունների, դրանց նշանների, այլև ընթացքի (տեմպի) և շափի ու կշռությի խնդիրները։ Այդ դասերի բովանդակությունը նորեն ցույց է տալիս, որ հայ և ընդհանուր արևելյան միջնադարյան երաժշտության վերաբերությամբ Հնչյունների հարաբերական տեսղությունների համատորադասության սկզբունքը որոշելու հարցում լուրջ դժվարությունների են հանդիպել ։ Լիմոնջյանն ու նրա շուրջ հավաքված մասնագետները։ Եվ չկարողանալով լուծել դրանք, բարվոք են համարել որդեգրել բրիստոնյա եվրոպայում (թեկուզ և բազմաձայն արվեստի համար) մշակված դրությունը¹⁰։

Վեցերորդ և հիտելյալ դասերը (մինչև ութ-ձայնի սկսվածքներն առաջ բերող կիսատ մնացած դասը, որով անավարտ է մնում ողջ աշխատությունը ևս), վերաբերում են հայկական միաձայնային երաժշտության ձայնեղանակների համակարգի խնդրին և մեր նյութի տեսակետով ունեն առավել կարևոր նշանակություն։

Այմազյանը հայկական ութ հիմնական ձայների ու նրանց դարձվածքների մասին նախընտրում է խոսել անմիջական հաջորդականությամբ¹¹։ Յուրաքանչյուր ձայնեղանակի բնութագրման կապակցությամբ նա նկարագրում է երկու կամ ավելի մեղեղիներ։ Ըստ որում ուշադրավ է, որ հեղինակն այստեղ հայկական բուն և դարձվածք տիպի ձայնեղանակներին տալիս է նաև դրանց մերձարևելյան նմանակների անվանակոչությունները, որոնք (վերջիններս) համապատասխան եղանակներով առկա են նրա «Արևելյան երաժշտության ձեռնարկում» ևս։

Ութ-ձայնի սկսվածքների բաժնում Այմազյանը դարձյալ հանվաճ (հայկական ու մերձարևելյան անուններով) հիշատակվող եղանակների վերաբերությամբ կիրառում է նաև «պարզ» (կամ «բուն») և «դարձվածք» (կամ «դարձվածք») ձայն հորջորջումները։ Համեմատությունից պարզվում է, որ բոլոր դեպքերում՝ տվյալ ձայնին պատկանող եղանակներից առաջինը, ընականաբար, «պարզ» կամ «բուն» տիպն է, իսկ մյուսը և կամ մյուսները՝ «դարձվածք» ձեւերը։ Առանձին-առանձին դուրս դրելով հայկական բուն և դարձվածք ձայներին համապատասխանող արևելյան եղանակների անունները, ստանում ենք հետեւյալ երկու տախտակները։

10 Այս պայմաններում, հայ և արևելյան երաժշտության շափակշռությային նրբությունները պահպանելու և արտահայտելու միջոցը կարող էր լինել և իրոք եզել է տեսղությունների դույզ բաժանման վրա հիմնված համատորադասությունը կատարողական արվեստում բնորդանուր հիմունք դիւրելու դիրքորոշումը, առանց հաշվի առնելու ավյալ հարաբերությունները խստորեն օպահանելու պահանջները։ Տե՛ս մեր հոգվածը՝ Հնչյունների հարաբերական ակողությունների համատորադասության սկզբունքը հայ միջնադարյան արվեստում և հայկական ձայնագրության նոր համակարգում, «Բանքեր Երևանի համալսարանի», Երևան, 1984, հ. 1, էջ 221։

11 Նման մոտեցման դեպքում ուշադրությունը կենտրոնանում է դարձվածք տիպի ձայնեղանակների մեղեղիական կառուցվածքի բնօնուրույն գծերի վրա, գծեր, որոնք բյուրեղացել են պատմական դարդացման բազմադարյան ընթացքում։

| | |
|----------------|----------------------------|
| ԱՃ—ՀԵՓԹՅՈՒԳՅԱՇ | ԱՃԴ—ՆԿՀԱՊՈՒՐ |
| ԱԿ—ՍԵՊՅԱՇ | ԱԿԴ—ԲՈՒՏԵԼԻՔ |
| ԲՃ—ՀՅՈՒՄԵԽՆԻ | ԲՃԴ—[ՇԵՀՆԱՊ] |
| ԲԿ—ԱՉԵՄ | ԲԿԴ—ՖԵՐԱՇ-ՓԵՎԱ, ԱՉԵՄ-ԱՉՐԱՆ |
| ԳՃ—ՀԻՉԱՊ | ԳՃԴ—ԷՎԻՀ |
| ԳԿ—ՍԱՐԱ | ԳԿԴ—ԲԵԱՅԻՆԻՊՅԱՐ |
| ԴՃ—ԻԱՓԱՀԱՆ | ԴՃԴ—ՍԵՊՅԱՇ-ՀՅՈՒՂՊԱՄ |
| ԴԿ—ԻԱՌԱՀԱԿ | ԴԿԴ—ԾԱՍԱ |

Իսկույն և բարբառ պատահելի են: Հայկական և արևելյան (հատկապես մերձարեվելյան) ձայնեղանակների հիմունքների ընդհանրությունը վաղուց, տակավին միջնադարում գիտակցված երևույթ է^{12:} Նոր ժամանակներում ե. Տնտեսյանը շահեկան դիտողություններ արեց այդ մասին: Նկատի առնելով նույնիսկ ուշ միջնադարի աննպաստ պայմաններում կենցաղավարած հայկական աշխարհիկ, քաղաքացին մասնագիտացված երգ-երաժշտությունն ու եկեղեցական (պաշտամունքային) երգարվեստը, և վերջինս համարելով մեղեղիական շատ ավելի անեղծ ազգային ձևերի պահեստարան, Տնտեսյանը շվարաննց հաստատելու, որ երկուսն ևս ընականորեն ներառնվում են մերձարեկան արգեստի ընդհանուր շրջանակների մեջ, որպես ամբողջական երևույթի տարրեր երևակներ^{13:}

Կոմիտասը միշտ էլ ընդգծել է, որ հայ երաժշտությունը ևս արևելյան է այնպես, ինչպես պարսիկ, արաբ, տաճիկ երաժշտությունը: Եվ իր անդրանիկ հողվածում իսկ, նվիրված հայկական եկեղեցական եղանակներին, առաջ է բերել հայ և մերձարեկան ութ հիմնական ձայնեղանակների մի համեմատական աղյուսակ: Այն՝ ամբողջապես համբուկնում է Այվազյանի դասագրքից քաղված և վերը բերված տախտակներից առաջինի հետ^{14:} Մենք, տակավին 1960-ական թվականների կեսերին ուսումնասիրելով Կոմիտասի կազմած աղյուսակը, թամբուրի Հարութինի ձայնագրած արևելյան եղանակների ստվար բազմությունը, այլև ուրիշ օժանդակ նյութեր, կազմել ու հրատարակել էինք նաև հայ երաժշտության դարձվածք տիպի ձայնեղանակների համապատասխան աղյուսակը^{15:} Եվ ահա, այժմ պարզվում է, որ մեր կազմած և հրատարակած աղյուսակն էլ զրեթե¹⁶ լրիվ համբուկնում է Այվազյանի դասագրքից քաղված երկրորդ տախտակին:

Հայկական միաձայնային երաժշտության զլսավոր ու երկրորդական ձայնեղանակների միակցությունը զարգացած ավատատիրության շրջանում, հատկապես մինչև XV դարը, ներկայացրել է՝ ժամանակակից առաջնային հարցերը, էլ 193:

12 Հմմատ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. հ. 55 (ժողովածու, 1489 թ., Երզնկա), էլ 466ր—467ա:

13 Տե՛ս Ե. Տնտեսյան, Ազգային երաժշտություն, «Արևո», Երևանագետ, 1867, հ. 6—7:

14 Կոմիտաս, Հողվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էլ 114:

15 Տե՛ս մեր հողվածը՝ Կոմիտասը և Հայոց հողերը երգարվեստի ուսումնասիրության հարցերը, էլ 193:

16 Ասում ենք՝ զրեթե, որովհետեւ Այվազյանը, հավանաբար անուշադրությամբ, թձ դարձվածք եղանակի մերձարեկան նմանակի անունը չի տալիս: «Շեհնազը» մեր հրատարակած տախտակից է:

Պատարագամատույցում, Գանձարանում և մանր ուսման գրքերում ամփոփված, տասնյակներով հաշվվող շափանմուշ մեղեդիների մի պերճ համակարգ: Կոմիտասի մոտավոր հաշվումներով, այդ մեղեդիները 150-ից ավելի են եղել¹⁷: Սուտ ապագայում հնարավոր կլինի, դարձյալ մոտավոր հաշվումների հիման վրա, շուրջ 200-ի բարձրացնել դրանց թիվը (տարբերակների հիմ)՝¹⁸: Այդ հարստության մեկ երրորդ մասը հազիվ հասել է մեզ՝ բանավոր ավանդությամբ պահպանված եկեղեցական պաշտամունքային երգերի ձայնագրեալ ժողովածուներում: Իսկ որտեղ են մնացածները: Դրանց հայտնաբերումը շի կարելի կապել խաղանշանների վերծանության կնճռոտ հարցին: Ընդհակառակը, խաղագրերի վերծանությունն ինքը ուղղակի կախման մեջ է հիշյալ շափանմուշ եղանակների հայտնաբերումից: Քանի որ տվյալ որևէ խաղավորում երաժշտական իմաստ և հնչող մարմնի ուժ է ստանում միայն և միայն նախօրոք տրված որևէ շափանմուշ եղանակի սահմաններում: Այս կապակցությամբ շատ շտարածվելու համար նշենք (ինչպես հավաստել ենք այլ առիթներով էլ)¹⁹, որ հայ երաժշտության մեղեդիական հարստությունների մեծագույն մասն ուղղակի կամ անուղղակի կերպով ներքաշվել է մերձարևելյան արվեստի ընդարձակ խճանկարի մեջ, ուշ միջնադարի պայմաններում, մասնավորապես, XV—XVIII դարերում, թեև բռն ընթացքը, կենարոնական Հայաստանում սկսվել էր տակավին XVIII հարյուրամյակից²⁰:

Վերագանակալով Հակոբոս Այվազյանի կազմած հայկական եկեղեցական ձայնագրության «Դասագրքին», և ամփոփելով այդ մասին առվածը, նկատենք, որ այն՝ իր թերի կամ անավարտ վիճակով էլ էական նպաստ է բերում մեզ հետաքրքրող հարցերի լուսարանության գործին: Բավական է հաստատել, որ Այվազյանի «Արևելյան երաժշտության ձեռնարկում» եղանակների գրառումները կատարված են իր իսկ նկարագրած հայկական ձայնագրության նշաններով. և նրանում առկա են հայ երաժշտարվեստի ութ ձայների ու դրանց դարձվածքների վերը նշված մերձարևելյան նմանակները:

Պետք է տսել, որ անկախ հայ երաժշտական մշակույթի զարգացման այն նոր աստիճանից, որն հատուկ էր Հակոբոս Այվազյանի գիտակցական կյանքի տարիներին, նա իր էությամբ պատկանել է նախակոմիտասյան շրջանի հայ եկեղեցական երաժիշտների տիպարին: Երաժիշտներ, որոնք պատմական պայմանների բերումով, այլև հայրենիքից հեռու գտնվելու պատճառով, անմասն են մնացել հայ ժողովրդական, հատկապես գեղջուկ երգերի հավաքման, հարդարման ու տարածման վերափոխիչ շարժումից: Նրանք (նույնիսկ հեռավոր զավառներում ապրողներից առանձին դեմքեր, Պուսի իրենց արվեստակիցների հետ կապ պահպանելու միջոցով), բացի

17 Կոմիտաս, Հոգվածներ և ուսումնասիրություններ, էջ 120:

18 100-ից անցնում են միայն ումանըուաման կոչված եղանակները, որոնց անունների և թվաքանակի ճշգրտման գործն սկսել ենք արգեն: Տե՛ս մեր Հոգվածները՝ նյութեր հայկական և ուսուական հոգերը երգարվեստների համեմատական ուսումնասիրության, «Բաները Մատենադարանի», հա. 13, Երևան, 1980, էջ 119—120. Հայկական ութ-ձայնի գանձարանային հատվածի մասին, «Բաները Մատենադարանի», հա. 15, Երևան, 1986, էջ 44—59:

19 Հ. Տագմիզյան, Теория музыки в древней Армении, Ереван, 1977, с. 186 (Проблема хазовых знаков пения).

20 Տե՛ս մեր Հոգվածը՝ Մузыкальная культура Армении и ее связи с Востоком, «Музыка народов стран Азии и Африки», вып. 5, М., 1986.

հայ եկեղեցական երաժշտությունից, այս կամ այն չափով ծանոթանում էին նաև Հունական (ուշ բյուզանդական) պաշտոնիրգությանը, եվրոպական ձայնագրագիտությանը (ինչպես նշվեց վերը), յուրացնում հայկական քաղաքային և ազգային-հայրենասիրական երգերի մշակույթը, ինչպես և մերձարևելյան աշխարհիկ մասնագիտացված երաժշտարվեստի դարավոր շերտերը:

Այս վերջին բնագավառին հայ երաժիշտները հաղորդվել են շատ վաղ ժամանակներից, իսկ ուշ միջնադարի սկզբներից նաև իրենց գործուն մասնակցությունն են բերել դրա շրջանակներում իրականացվող ստեղծագործական, կատարողական և տեսական ու մանկավարժական աշխատանքներին: Դա ապացուցող գրավոր փաստաթղթեր, այդ թվում և ամբողջական գրվածքներ կան: Դրանցից մեկն է՝ XVIII դարի առաջին կեսում ծաղկած հայ երաժիշտ Թամրուրի Հարութինի վերոհիշյալ՝ մեր շանքերով լույս տեսած աշխատությունը: Ճիշտ այդ շարքին է պատկանում նաև Հակոբոս Ալվագյանի «Արևելյան երաժշտության ձեռնարկը»²¹, որն և հրատարակության ենք պատրաստում ներկայումս:

Այն գրված է արևմտահայերենով, բայց իր բովանդակությամբ ամբողջապես միջնադարյան երաժշտական մշակույթի արտացոլումներից է: Նրանում Ալվագյանը գրավոր հաստատագրել է զլիսավորապես սերնդե-սերունդ բանավոր կերպով փոխանցված ավանդական եղանակները, կշռույթներն ու դրանց մասին գիտելիքները, ողջ նյութը ենթարկելով մի ուրույն դասակարգության, սեփական բազմամյա փորձի հիման վրա: Նա փնտել ու գտել է մի քանի գրավոր մանր աղբյուրներ էլ, որոնք, սակայն, իրենց մասնագիտական մակարդակով և կամ հատվածական բնույթով նրան շեն զոհացրել: Դրանցից մեկը հիշատակում է Ալվագյանը, Զեռնարկի «Հավելված» բաժնում թվարկվող եղանակների վերաբերյալ ասելով, որ վերջիններիս «մասին թուրք հիշատակարան մը»²² տեղեկություններ կուտա, առանց կարող բլլալու ճաշակ մը կամ օրինակ մըն ալ կցել, որպեսզի լավ հասկցվեր հեղինակին միտքը»:

Այդ գրվածքը մենք շդտանք Ալվագյանի դիվանում: Նրանում մենք հանդիպեցինք հայատառ թուրքերենով շարադրված մի այլ փոքր նյութի²³, որին նույնպես պատշաճում են Ալվագյանի թիշ առաջ բերված խոսքերը: Ու մեկ էլ Թամրուրի Հարութինի վերոհիշյալ աշխատությունից թեև կարեվոր, բայց առանձին մի հատված²⁴:

Ըստ եղած տվյալների, ոչ միայն հայ, այլև Կ. Պոլսի թուրք երաժիշտների շրջանում իսկ, Ալվագյանի գործունեության տարիներին, շի եղել որևէ ձեռնարկ, որում նոր ժամանակների պահանջների համեմատ դասակարգված ու, ըստ կարելվույն, հստակ ու լրիվ ներկայացված լինեին արևելյան երաժշտության մեղեղիական և կշռույթային կուտակված հարստությունները: Այնպիս որ, Ալվագյանը քննարկվող Զեռնարկը աշխատասիրել է՝ մի

21 ԶԱԳԱԲ, Հակոբոս Ալվագյանի դիվան, նյութ հ. 2:

22 Մէժմուայի Շարդը (-ծաղկաքաղ երգերի-Մետման շարկ) այսպես է անգանում Հեղինակը հիշյալ աղբյուրը:

23 Մազամաթը միւթետամիւյե (-տարածվոծ մուզամներ-Макамати mütedavile), ԶԱԳԱԲ, Հակոբոս Ալվագյանի դիվան, նյութ հ. 5:

24 Նույն տեղում, նյութ հ. 4:

կարենը բաց լրացնելու պիտակցությամբ։ Համառոտ առաջարանում նա գրում է.

«Արևելյան երաժշտություն անունին ներքեւ պետք չէ կատարյալ գործի մը երաշխավորությունը փնտրել մեր այս աշխատության մեջ։ Հույժ կարձ ժամանակի մեջ՝ թերի պայմաններում ներքեւ պատրաստված գործ մ'է այս տեսակ մը հատակադիօ ապագա գրվածի մը՝ ուր այժմեն կարելի է ըստ կարելվույն ճշտորեն թվված և բացատրված տեսնել նյութին երկու գլխավոր կետերը, երկու առանձին մասերու մեջ. 1) եղանակները և 2) ուսուլները։

Այս հանդամանքներով ներկայացող գործ մը տարակույս շկա թե մատշելի և օդտակար կրլա ամենին ավելի անոնց համար, որոնք Հայկական Չայնագրության արվեստին սկզբունքներուն տիրանալի հետո կուզեն ավելի ևս զարգանալ և իրենք իրենց մեջ առանձին հեղինակություն մը ըլլալ։ Ուստի այս գործը իր թերություններովն հանդերձ, ուրկե շենք հագակնիր զերծ համարել զայն, միակն է, որ կ'հանձնարարի երաժշտության արվեստին սիրահար անձներու²⁵։

Թող շշփոթեցնեն մեզ ճշմարիտ գիտնականին հատուկ զգուշավոր արտահայտություններն ու վերապահումները։ Համեմատությունը ցույց է տալիս, որ Այլազյանի Չեռնարկում ընդորված ու յուրովի դասակարգված մեղեդիական նյութը զգալիորեն ավելի է, քան այն, ինչ շուրջ քանի տարի վերջ պրոֆ. Լավինյակի երաժշտական բազմահատոր հանրագիտարանում «La musique Turque» ծավալուն հոգվածի շրջանակներում ներկայացրել է Ռառուֆ Եկտա Բեյը²⁶։ Եվ որ կարեռն է, բացի ամեն ինչից, Այլազյանի Չեռնարկում առաջ բերված եղանակները հատկապես կրում են հայ երաժշտի ճաշակի կնիքը։

Աշխատության առաջին մասը վերնագրված է՝ «Մանոթություն ընդհանուր եղանակներու վրա», որտեղ ուշագրավ է «մուղամ» (կամ «շորե» և կամ «ավազե») խոսքի բացակայությունն առհասարակ։ Այստեղ դասակարգված են շուրջ հարյուր եղանակներ, իրենց ձայնելեջային կանոնների բացատրություններով և որպես այդ կանոնների իրացման հնարավոր ձևեր առաջ բերվող ամբողջական ձայնագրություններով (չհաշված «Հավելված» բաժնում հիշատակվող մի քանի տասնյակ եղանակները)։ Ամեն անգամ հեղինակը նախ տալիս է եղանակի անունը (ասենք՝ Եղյաշ)։ Հետո հաստատագրում է նրա համաձայնութային (լադային) հիմքն ու Ելեջային հատակադիօ (կանոնը)՝ թամրուրի համապատասխան մատնատեղերի հիշատակության միջոցով։ և հուսկ ուրեմն առաջ է բերում ամբողջական եղանակի ձայնագրությունը, հայկական ձայնանիշներով, միշտ նախապես նշելով՝ «զոր օրինակ»։

Աշխատության երկրորդ մասը վերնագրված է Ուսուլները, այն է՝ արեւելյան երաժշտության մեջ երգ ու նվազի հետ դափի կամ մեկ ամ գործիքի օգնությամբ մշտապես հնչող շափակշուրջային տիպական բանաձեւերը։ Դրանք այստեղ ճիշտ կերպով մեկնարանվում են որպես որևէ միաձայնացին ստեղծագործության կանոնը՝ շափի, կշռութի ու նաև ձեի (Հորինված-

25 Հակոբոս Այլազյան, Երևելյան երաժշտություն (Չեռնարկ Արևելյան երաժշտության), նշվ. ձեռ-ը, էջ ա-ը (Երկու խոսք)։

26 Հմմա. La musique Turque, par Raouf Yekta Bey, Encyclopédie de la musique et dictionnaire du conservatoire, fond. H. Louignac, 1-er partie, V. Paris, 1922, p. 2980.

քի) մակարդակի վրա: Բացատրվում են այդ բանաձևերը կազմող տեսդության տարրեր շափերի պայմանական նշանները: Ու դրանց միջոցով էլ նշանագրվում -հաստատագրվում են շուրջ երեսուն ուսուլներ:

Ամբողջական առած, Հակոբոս Այվազյանի «Արևելյան երաժշտության Զեռնարկը» կարևոր նշանակություն ունի երկու տեսակետով: Նախ, դիտարկվող Զեռնարկը մի պատվավոր տեղ է գրավում Մերձավոր արևելքի շափացույցերով ուշ միջնադարում և նոր ժամանակներում ազգային տեղական լեզուներով շարադրված փոքրաթիվ այն աշխատությունների շարքում, որոնց մեջ ամփոփված-հաստատագրված են հնուց բանավոր ավանդությամբ նաև հայ երաժիշտների մասնակցությամբ սերնդե-սերունդ փոխանցված քաղաքային մասնագիտացված երաժշտարվեստի տիպական եղանակներն ու կշռությունները և նրանց մասին անհրաժեշտագույն զիտելիքները. և որոնք կրում են որոշակի ժամանակի, միջավայրի ու նաև հեղինակի անհատականության կնիքը: Եվ հետո, ըստ եղած տվյալների, Այվազյանի աշխատությունն իր մեջ թարցրած պահում է ուշ միջնադարի ընթացքում աստիճան. բարձրագույն վարագին տարածով մերձարևելյան քաղաքացիներ-երգ-երաժշտության ընթացիկ հոսքին պատշաճեցված) և ընդհանուր արևելյան անուններով վերակենքված մի ամրող շարք հայկական տոհմիկ, ուփական ձայնեղանակներ, որոնք զատորոշելով վերականգնելը հայ երաժշտության կենսական խնդիրներից է:

Н. К. ТАГМИЗЯН

АКОПОС АЙВАЗЯН И ЕГО «РУКОВОДСТВО ПО ВОСТОЧНОЙ МУЗЫКЕ»

Резюме

Акопос Айвазян, жизнь и деятельность которого трагически оборвалась во время первой мировой войны, принадлежит к плеяде докомитасовских церковных музыкантов—мастеров духовного песнетворчества и светской городской профессиональной музыки. Мастера эти, не знавшие армянской крестьянской песни, различали две ветви национального музыкального искусства: духовную и светскую. Под последней они подразумевали ту часть городской профессиональной музыки Ближнего Востока и Малой Азии (в частности—Константинополя), которую с давних пор создавали сами армяне.

Примерно с середины XIII века, когда процессы исламизации вслед за большими регионами Ближнего Востока охватили и Малую Азию, армянские светские поэты-музыканты—гусаны, постепенно приспособливаясь к новым условиям, определили ближневосточные аналоги свыше 150 главных и побочных гласов армянской монодии, усвоили практику сочинения тюркоязычных песен, переняли всю восточную музыкальную терминологию и со всем своим народнонациональным музыкальным багажом включились в дело развития практики и теории многонациональной общевосточной музыки.

«Руководство по Восточной музыке» Акопоса Айвазяна является отражением этой многовековой практики. Оно состоит из двух частей: мелодии и усули. Особо богатой является первая часть, где автор объясняет структуру около 100 мелодических моделей и приводит их записи знаками новоармянской нотации.

N. K. TAHMIZIAN

HACOPOS AIVAZIAN ET SON
„MANUEL DE MUSIQUE ORIENTALE“

Résumé

Hacopos Aïvazian, dont la vie et l'œuvre furent tragiquement interrompues pendant la Première Guerre mondiale, appartient à la pléiade de musiciens ecclésiastiques—maîtres du chant spirituel et de la musique urbaine séculière professionnelle—ayant précédé Komitas. Ne connaissant pas les chansons rurales arméniennes, ces musiciens distinguaient deux branches de l'art musical national: spirituelle et séculière. Cette dernière sous-entendait la partie de la musique urbaine professionnelle du Proche-Orient et de l'Asie Mineure (en particulier, de Constantinople) créée depuis toujours par les Arméniens eux-mêmes.

Vers le milieu du XIII^e siècle, lorsque le processus d'islamisation, à la suite d'importantes régions du Proche-Orient, envahit également l'Asie Mineure, les poètes-mélodes séculiers arméniens—les goussans—s'adaptèrent progressivement aux nouvelles conditions; Ils déterminèrent les analogues proche-orientaux de plus de 150 modes principaux et collatéraux de la monodie arménienne, assimilèrent la pratique de la composition des chansons en langue turque, empruntèrent toute la terminologie musicale orientale et, avec tout leur bagage musical national et populaire, ils prirent part au développement de la théorie et de la pratique de la musique orientale multinationale.

Le „Manuel de musique orientale“ de Hacopos Aïvazian est le reflet de cette pratique séculaire. Il se compose de deux parties: mélodies et „oussouls“ (modes). La première partie est particulièrement riche, l'auteur y explique la structure d'environ cent modèles mélodiques et donne leur inscription en signes de la nouvelle notation arménienne.